

Genius of Folk Song Art
(to the 300 anniversary since the birth of Sayat-Nova)
Sokrat Khanyan
Summary

By UNESCO in 2012, around the world celebrate the 300-th anniversary of the birth of the great Armenian poet-ashug Sayat Nova.

This article is devoted to the philosophy of the immortal poetry of the artist.

Sayatnovevedenie basically considered Sayat Nova as a singer of love.

The author has specific examples proving that creativity of Sayat Nova full of philosophical understanding of life.

This implies the complexity of his poetry, where the distinctive poetic images glorified theme of divine love, hard work, patriotism, freedom, brotherhood of people, etc.

A striking example of this is the fact that poet has created the songs and sang at various Armenian, Georgian, Turkish, and sometimes Persian and Arabic.

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ*

Օֆելյա Բաբայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ԱրդՀ*

2012-ին լրանում է հայ գրատպության 500-ամյակը. հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրել է 1512թ. Վենետիկում: Տոնակատարությունը սկսվել է Վենետիկի սուրբ Ղազար կղզուց և կշարունակվի ողջ տարվա ընթացքում: XIX դարի երեսունական թվականներին տպարան է բացվել նաև Շուշի քաղաքում:

Տպագրության գյուտը կապվում է Հովհան Գուտենբերգի հետ, որը 1455թ. գերմանական Մայնց քաղաքում հրատարակել է առաջին գիրքը: Այդ հայտնագործությունը այնուհետև տարածվել է Իտալիայում (1465), Իռլանդիայում (1465), Շվեյցարիայում (1468), Չեխիայում (1468), Ֆրանսիայում (1470), Լեհաստանում (1473), Անգլիայում (1474), Ղանիայում (1482), Շվեդիայում (1483), Պորտուգալիայում (1487) և այլն: Եվրոպական երկրներին ու ժողովուրդներին ավելանում են հայերը: Բայց հայ-

կական տպագրությունը սկիզբ է առնում Հայաստանից հեռու՝ Վենետիկում: 1470 թվականից սկսած Վենետիկը դառնում է եվրոպական տպագրության կենտրոն, որտեղ տպագրում էին ոչ միայն լատիներեն ու իտալերեն, այլ նաև հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, եբրայերեն, հին սլավոներեն և այլ լեզուներով¹:

Դարերով Հայոց երկիրը մաքառել է արտաքին թշնամիների դեմ, փրկվել բնաջնջումից, պահպանել իր ազգային կերպարանքը: 15-16-րդ դարերում ևս արևելքից ներխուժող ցեղերը մասսայական արտագաղթի պատճառ են դարձել: Գաղթողների մի մասը «նոր հայրենիքում» կարողացել է ոչ միայն բարեկեցիկ կյանք ստեղծել, այլև գործել «յոգուտ ազգի և հայրենեաց»: Դեռ Կիլիկյան հայ թագավորության օրերից Իտալիան քաղաքական և առևտրական հարաբերություններ ուներ հայերի հետ. «Վաղուց հավատացնում են, որ հետագայում վենետիկյան կոչվող ընտիր ժանյակների արտադրությունը առաջին անգամ հայ արհեստավորներն են մտցրել Վենետիկ, ինչպես և բանասեր, պրոֆ. Լևոն Մսերյանի կարծիքով՝ կրկնակ հաշվապահության իտալական կոչված ձևը հայ վաճառականների հեղինակությունն է»: Այդ շահերից ելնելով՝ Մարկոս Ծիանին, որը շատ անգամ էր եղել Կիլիկիայում ու հարստացել էր այնտեղ, Վենետիկում նույնիսկ հիմնել էր «Հայոց տունը»՝ հայերի համար իջևան, որտեղ էլ հանդիպում էին տարբեր տեղերից եկած վաճառական, կրոնավոր կամ աղքատ հայերը: 1510-ական թվականներից Վենետիկում արդեն գործում էին մոտ երկու հարյուր տպարաններ, հարյուրավոր գրախանութներ: 25 տարվա ընթացքում Վենետիկում տպագրված գրքերի թիվը հասնում էր երկու միլիոնի: Բացի կրոնական բովանդակության գրքերից՝ Վենետիկում տպագրում էին նաև դասականների երկեր²: «Հայոց տանը» ապրողներն էլ օգնում էին Վենետիկի արհեստավորներին՝ հայկական տառեր փորագրելու և ձուլելու: Եվ 1512թ. Վենետիկում Հակոբ անունով հայը տպագրում է հինգ հայերեն գիրք (Ուրբաթագիրք, Պատարագատետր, Աղթարք, Պարզատունար, Տաղարան)՝ երկգույն (սև և կարմիր) ներկերով,

*ԾԱՊՈՒՄ ԴՆՆՈՒՄ ԵՆՈՒՄ 27.06.12Է

ԾԱՊՈՒՄ ԴՆՆՈՒՄ ԵՆՈՒՄ 27.06.12Է ԾԱՊՈՒՄ ԴՆՆՈՒՄ 27.06.12Է ԾԱՊՈՒՄ ԴՆՆՈՒՄ 27.06.12Է

¹ Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ.1 (Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում), Եր., 1977, էջ 22-23:

² Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 128-129: Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 38-39:

բոլորագիր ուղղահայաց տառերով, ծաղկատառ գլխագրերով, գլխագարդերով: «Պատարագատետրը» եկեղեցում գործածելու համար էր, մնացածները ժողովրդական գրքեր էին: Հատկապես աչքի էր ընկնում «Տաղարանը», որն ընդգրկում էր XV դարի ժողովրդական երգասացների, այդ թվում և Հովհաննես Թևոկուրանցու երգերը¹:

Երկրորդ հայ տպագրիչը՝ Աբգար Եվդոկացին կամ Թոքատցին, ով հայտնի է Աբգար Դպիր անունով, դարձյալ հանդես է գալիս Վենետիկում 1560-ական թվականներին: Միքայել Սեբաստացի կաթողիկոսը քաղաքական նպատակներով 1562թ.մայիսին Աբգար Ամիրբեկյանի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Հռոմի պապի մոտ: Իբրև ընծա տանում են նաև «մյուռն, խաչոսկի, մատանի օրհնյալ և ս. Թեոդորոսի մասունք»: Մեկ ու կես տարի տևում է այդ ճանապարհորդությունը: 1563թ. վերջերին Աբգար Թոքատցին հասնում է Հռոմ, ներկայանում Պիոս IV-ին, նրան հանձնում հայոց կաթողիկոսի գրություններն ու ընծաները: Էջմիածին վերադառնալիս Աբգարը լինում է Վենետիկում, ծրագրում ներկայանալ մի քանի պաշտոնատար անձանց: Սակայն իմանալով, որ թուրքական կառավարությունը լսել է իր պատգամավորության քաղաքական նպատակի մասին, վախենում է շարունակել ճանապարհը: Որոշում է հայերեն գրքեր տպագրել: Նա ծուլել է տալիս երկու տեսակ հայերեն նոր տառեր և 1565թ.մի թերթի վրա լույս ընծայում առաջին հայերեն տպագիր օրացույցը, որ կոչվում է «խառնայինթոր տունարի գեղեցիկ և պիտանի»: Այդ օրվանից Աբգար դպիրը, Եվրոպայի սին խոստումներից և «հավատի գնով» առևտուր անելուց հուսախաբ, դադարում է քաղաքական գործիչ լինելուց և զբաղվում տպագրության գործով: Նրա ջանքերով նույն 1565թ. լույս է տեսնում մի Սաղմոսարան կամ «Փոքրիկ մեկնիչ սաղմոսաց»: Փաստորեն 1513-ից մինչև 1565 թ. հայերեն գրքեր չեն տպագրվել: Հռոմի հաջորդ պապի՝ Պիոս V-ի օրոք հավատաքննությունը ավելի է սաստկանում: Անհնարին է դառնում առանց «լատին կղերին գրաքննության» «լուսավորչական» հայ եկեղեցու գրքեր հրատարակել: Եվ Աբգար Թոքատցին 1567թ. գնում է Կ.Պոլիս՝ այնտեղ շարունակելու իր տպագրական գործունեությունը²:

¹ Լեո, *Երկերի ժողովածու*, հ.5, Եր., 1986, էջ 131:

² Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Եր., 1958, էջ 59-67: Լեո, *Երկերի ժողովածու*, հ.5, Եր., 1986, էջ 158-164:

Կ.Պոլսում հայոց Ս.Նիկողայոս եկեղեցուն պատկանող ու նրան կից շենքում բացվում է առաջին հայկական տպարանը, որը 1567-69թթ. տպագրում է հայոց եկեղեցուն նվիրված, լուսավորչական եկեղեցու մեջ գործածվող գրքեր, դրանով իսկ համեմատաբար թուլացնում կաթոլիկ տպարանների ազդեցությունը հայերի վրա («Փոքր քերականութիւն կամ այբբենարան», «Ժամագիրք կամ աղօթամատոյց», «Պատարագամատոյց», «Տօնացոյց», «Պարզատումար», «Տաղարան», «Մաշտոց»):

Որոշ դադարից հետո՝ 1584թ., Հռոմում հայ քահանա Հովհաննես Տերգնցին իր որդի Խաչատուրի հետ Աբգար Թոքատցու որդի Սուլթանշահ-Մարկ Անտոնի հովանու նեքո տպագրում է Գրիգոր XIII պապի հաստատած նոր տոմարի լատիներենից հայերեն թարգմանությունը («Տումար Գրիգորեան»), որի արդյունքում Գրիգորյան տոմարական ռեֆորմը Արևմուտքից տարածվում է նաև Արևելքում: Այնուհետև 1587թ. Հովհաննես Տերգնցին որդու հետ Վենետիկում տպագրում է դավանաբանական տեսակետից մի անմեղ գիրք՝ Սաղմոսարան¹:

Հայերեն հաջորդ գիրքը («Սաղմոս») տպագրվում է Լեհաստանի Լվով քաղաքում (այժմ՝ Ուկրաինա): 1616թ. Հովհաննես Քարմատանենցը Լեհաստանում բացում է առաջին հայ տպարանը, ինչպես ինքն է ասում՝ «կազմարանը»: Գիրքը, բացի բուն սաղմոսից, ունի մի շարք աղոթքներ և Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմքը»: Միլանում 1621թ. Աբրոսյան վարժարանի տպարանում տպագրվում է Ֆրանցիսկո Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանը՝ «Բառգիրք Հայոց»: Այն վերահրատարակվում է Փարիզի արքունի կամ ազգային տպարանում 1633թ.:

Հռոմում՝ տեղի հայ գաղութի «հոգևոր հովիվ» Բարդուղիմեոս քահանան իտալացի Ստեփ. Պավլինոսի տպարանում, 1623թ. տպագրում է «Կանոն Էվձենիոսի չորրորդի Փափի» գիրքը: Դա 1439թ. Եվգենիոս Դ պապի՝ Ֆլորենցիայի ժողովին տված լատին և հայ եկեղեցիների իբր միացման մասին կոնդակի լատիներենից հայերեն թարգմանությունն է: Նույն թվականին Հռոմում՝ Ուրբանյան դպրոցի տպարանում, տպագրում է նաև մի այբբենարան՝ «Այբուբենք Հայոց եւ հրամանաւ սրբազան Գրիգորիս հնգետասաներորդի սուրբ Փափին... այլ ևս սուրբ ժողովոյն որ վասն հաստատութեան հաւատոյ, կարգեալ կազմեալ եղև թվ ՌՌԻԳ»: 1624թ. լույս է տեսնում նույն հեղինակի հայերենի քերականությունը՝ լատիներեն բացատրու-

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 68-74:

թյամբ: 1630թ. Ուրբանոս VIII-ի հրամանով Հռոմի կաթոլիկության պրոպագանդայի տպարանի հայերեն բաժինը տպագրում է «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» կրոնական գիրքը, որը ֆրանսերենից թարգմանել էր հայ քահանա Պողոս-Պետրոսը: Գիրքը վերահրատարակվել է 1634թ.: «Հաւատոյ տարածման սուրբ ժողովի» ջանքերով Հռոմի Ուրբանյան դպրոցի տպարանում տպագրվում են նաև կրոնական-դավանաբանական այլ գրքեր՝ «Դաւանութիւն ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ», «Քրիստոնէական վարդապետութիւն», «Ձեռքածութիւն յերկինս», «Մանաւանդականք առարկութիւնք» և այլն: Նույն տպարանում են տպագրվել նաև կրոնավոր Կղեմես Գալանոսի կազմած հայոց լեզվի քերականությունը՝ լատիներեն բացատրությամբ (Համառօտ քերթողութիւն քերականութեան շարակարգեալ ի կարգէ Թէաթինոսաց Կղեմէս վարդապետէ, ներում կատարելապէս պարունակին արիեստք չորք, այսինքն. Ուղղագրութիւն, Բանաստեղծութիւն Արտաբերութիւն և Շարադրութիւն, արտահանեալ ի քերականութեանցն հայոց, յունաց և լատինացւոց. ի խնդրոյ Յովհաննէս Եդեսացւոյ. քաջ ռաբունապետի և աստուածաբան Արքեպիսկոպոսի Միջագետաց աշխարհի» (1645թ.), «Միաբանութիւն Հայոց ս. եկեղեցւոյն Հռովմաց» երեք հատորից կազմված գիրքը և հայ-լատիներեն մի քերականություն (1675թ.), ինչպես նաև Աստվածատուր Ներսեսովիչ եպիսկոպոսի «Բառգիրք հայերեն-լատիներեն (1695 թ.) բառարանը¹:

XVII դարի 40-ական թվականներին Վենետիկում գրատպությամբ զբաղվում էր նաև Հովհաննես Անկյուրացին, որին իտալացիները կոչում էին Ջիովաննի Մոլինո: 1642թ.մի հույն տպարանատիրոջ մոտ հրատարակում է «Սաղմոս ի Դաւիթ» գիրքը (գրաշարը Հովսեփ անունով տասներկուամյա մի տղա էր), 1643-ին՝ «Յիսուս որդին»: 1660-ին լույս է տեսնում վերջին հրատարակության արտատպությունը (գրաշարը Ստեփան անունով մի հայ տղա էր, սրբագրիչը՝ Յաղութ աղա Ջուղայեցին): Վենետիկում մի քանի իտալացի հրատարակիչներ իրենց տպարաններում հայկական բաժին էին սարքավորել ու գրքեր էին հրատարակում: Օրինակ՝ Միքել Անջելո Բարբոնին 1671թ. տպագրում է «Տօնացոյցը», մինչև 1693 թվականը՝ ևս 13 գիրք՝ «Հայելի ճշմարտութեան», «Բուրաստան աղօթից», «Նորագոյն ծաղիկ զօրութեան» և նման գրքեր: Իսկ

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 80-82: Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 128-132:

1695-ից մինչև 18-րդ դարի 70-ական թվականները հայերեն հրատարակությունները շարունակում է Անտոն Բարթոլիի տպարանը: Այդ տպարանատերերը հաճախ հայ վաճառականներից գումարներ էին ստանում իրենց «հայասեր» գործունեության համար և նրանց անունը դրոշմում գրքի ձևակալին: Օրինակ՝ 1684թ. Բարթոնիի տպարանում տպագրվել է «Աւետարանը», որի առաջին էջին գրված էր «արդեամբք և գոյիւք ագուլիսցի Մարտիրոսի որդի Ոսկանի»: Երևանցի Թադեոս ք.Համազասպյանը հայ վաճառական ջուղայեցի Խոջա Սահրատի որդի Գասպարի հետ նույնպես փորագրել և ծուլել է տալիս տառեր՝ «գմինն խոշորածն և գմիւսն մանրագոյն ի պէտս խորագրաց» և 1686-ին տպագրում «Խորհրդատետր» (կամ «Պատարագատետր») գիրքը: Նույն թվականին է տպագրվում նաև «Ճաշոց» գիրքը 2 հատորով, 1687-ին՝ Հովհաննես Հոլովի «Խոկումն քրիստոնէական», «Պատասխանատրութիւնք», «Պարզաբանութիւն սաղմոսաց» և այլ գրքեր: Այդ տպարանը գործում էր իտալացի Ջիակոմո Մոռետիի տպարանին կից¹:

XVII դարում տպարան է ստեղծվում նաև Իրանում՝ Նոր Ջուղայում: Հայտնի է, որ Նոր Ջուղան թագավորի հրամանով հիմնել են ջուղայեցի գաղթականները: XVII դարի երեսունական թվականներին արդեն Արևելքում այն դարձել էր տնտեսական և մշակութային օջախ: Քաղաքի առաջնորդ Խաչատուր վ.Կեսարացին հիմնում է դպրոց, գրադարան, նաև տպարան և տպագրում պարսկահայ առաջին գիրքը՝ «Հարանց վարքը» (1641): 1642-ին տպագրվում է «Ատենի ժամագիրքը»: Դեռևս 1639-ին Խաչատուր Կեսարացին իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես վ. Ջուղայեցուն, ուղարկում է Եվրոպա՝ տպագրական գործն ուսումնասիրելու: Այդ ճանապարհորդությունը տևում է մոտ հինգ տարի: Վարպետների հետ հայերեն տառերով Հռոմից գնում է Լիվոռնո, մի իտալական տպարանում տպագրում «Սաղմոսք Դաւթին» գիրքը (1644թ.)՝ Խ.Կեսարացուն ուղարկելու համար: Հովհաննես Ջուղայեցին Նոր Ջուղա է հասնում Խ.Կեսարացու մահից հետո: Մեծ դժվարություններով 1647թ. հրատարակում է իր մի աշխատությունը՝ «Պարզատումար Ագարիայի փոխարկեալ ի Յովհաննէսէ վարդապետէ Ջուղայեցոյ աշակերտէ մեծին Խաչատուրոյ Կեսարացոյ»: 1650թ. փորձում է հայերեն տպագրել Աստվածաշունչը, բայց մի քանի մամուլ տպագրելուց հետո

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 90-97:

Խ.Կեսարացին ստիպված է լինում փախչել Էջմիածին: Որոշ դադարից հետո՝ միայն 80-ական թվականներին, Նոր Զուղայում տպագրվում է երեք գիրք՝ «Գիրք ժողովածոյ ընդդեմ երկաբնակաց» (1686), «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» (1688) և «Կրթութիւն հաւատոյ, Հովհ.վ.Մրքուզի» (1688)¹:

Հայ գրատպության պատմության մեջ կարևոր տեղ ունի Ամստերդամը, ուր հայերեն գրքերի տպագրությունը սկսվել է 1660-ին, ավարտվել 1716-ին: Հայոց Հակոբ Դ կաթողիկոսը կաթողիկոսության քարտուղար և ծաղկող դպիր Մատթեոս Ծարեցուն 1656-ին ուղարկում է Եվրոպա՝ հայկական տպարան հիմնելու հանձնարարությամբ: 1658-ին հասնելով Ամստերդամ՝ նա հայերեն տպագրական տառեր է պատրաստել տալիս, բայց հիվանդանում է, և սկսած գործը շարունակում է Էջմիածնի միաբան Ոսկան վարդապետի վաճառական եղբայրը՝ Ավետիս Ղլիճենցը: Վերջինս հրավիրում է նաև իր եղբորը՝ Ոսկան վարդապետին: Ավետիսը վերջացնում է Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» գրքի տպագրությունը, 1663-ին տպագրում նաև «Ժամագիրքը»: Տպարանի գործը շարունակում է Կարապետ Ադրիանեցին, որը սիրով սպասում էր իր «մեծ ռաբունապետ» ուսուցչի՝ Ոսկան Ղլիճենցի (Երևանցի) ժամանելուն: Ավարտում են «Շարականի տպագրությունը», 1666-ին լույս է տեսնում «Այբբենարան և քրիստոնեական» դասագիրքը, Ոսկան Երևանցու տպարանում 1666-68 թթ. լույս է տեսնում առաջին հայերեն «Աստվածաշունչը» (Երկրորդ տպագրությամբ 1705թ. լույս է տեսնում Կ.Պոլսում: Երրորդը Մխիթար Աբբայի «Աստուածաշունչն» է, որ տպագրվել է 1773-ին Վենետիկում՝ Անտոն Բարտոլիի տպարանում): Նույն տարիներին լույս է տեսնում ևս 12 գիրք՝ «Ավետարանը» (Նոր կտակարան), «Մաշտոցը», «Աղուէսագիրքը», Մ.Խորենացուն վերագրվող Աշխարհագրությունը, «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեան որ է Աղուէսագիրք» և այլն: 1669թ. հրատարակվում է ևս երկու գիրք՝ «Ձայնքաղ շարական հայկական խաղերով» և Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը», 1670-ին՝ «Քրիստոնեական», 1671-ին՝ «Պարտեզ հոգևոր» գրքերը:

1672թ. Ոսկան Երևանցին իր տպարանը փոխադրում է Մարսել, որտեղ էլ ընդհատումներով գործում է մինչև 1683թ.: 1673թ. լույս է տեսնում «Գրքույկ կարևոր հանապազորդեան» գիրքը: Սակայն Հռոմի կաթոլիկ եկեղեցին չէր կարող չհետևել Ոսկան Երևանցու

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 83-90:

հրատարակություններին, որովհետև նա «կապ ունի էջմիածնի կաթողիկոսի հետ» Տպարանում շարվում էր «Ատենի ժամագիրքը», որը հազիվ լույս է տեսնում 1679-ին: Հալածանքների պայմաններում «Սրբ. էջմիածնի և Սուրբ Սարգսի զորավարին» տպարանում 1676թ. տպագրվում է «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի» գիրքը, 1683-ին՝ «Ակն հոգեկան» և «Պարտեզ հոգևոր» գրքերը:

Թովմա վ.Նուրիջանյանը, որ «եռամեծ վարդապետի» անուն էր շահել, 1693թ. Գողթնից հասնում է Ամստերդամ, որտեղ 1695թ. հայոց մեջ առաջին անգամ հրատարակվում է աշխարհագրական մի մեծադիր քարտեզ՝ «Համատարած աշխարհացոյցը», որն ուներ իր բանալին՝ «Բանալի համատարած աշխարհացոյցի» (1696): 1696-ին լույս է տեսնում «Թովմաս Գեմբացի», 1698-ին՝ «Նոր կտակարան», «Ձայնքաղ շարական»: 1699-ին՝ «Դուռն իմաստութեան» կամ «Ոսկեայ դուռն դպրատան», «Գանձ չափոց, կշռոց թւոց և դրամից բոլոր աշխարհի», «Պատմութիւն վաճառականութեան» գրքերը: 1698թ., առանց տպարանի հիշատակության, տպագրվում է նաև «Բառգիրք Հայոց Երեմիա վարդապետի» գիրքը¹:

Ամստերդամի հայկական տպարանը գործում է մինչև 1717 թվականը: Տպարանը ղեկավարում էր Նուրիջանյան Թովմաս եպիսկոպոսը, աշխատակիցներն էին նրա ազգականներ Դուկաս, Միքայել և Մատթեոս Վանանդեցիները: Ամստերդամում է գերմանացի հայագետ Շրյոդերը Թովմա եպիսկոպոսից ու Դուկասից հայերեն սովորել, գրել «Արամեան լեզուի գանձ» հայերեն-լատիներեն գիրքը, որը տպագրվել է նույն տպարանում 1711թ.: 18-րդ դարասկզբի 17 տարիներին Ամստերդամի հայկական տպարանում լույս է տեսել 14 գիրք՝ «Բնաբանութիւն իմաստասիրական և տարերական» (1702), «Պաշտօն աստուածային...» (1704), Հովհ.վարդ. Զուղայեցու «Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն» (1711), «Հայելի Աստուածաշունչ Հին Կտակարանի» (1713), «Պատկերասէր պատկերատեաց» (1716), «Ժամագիրք» (1717) և այլն:

18-րդ դարում մի քանի ոչ հայկական տպարաններ շարունակել են հայկական գրքերի տպագրությունը: Դրանցից է Հռոմի Ուրբանյան կամ «Հաւատոյ տարածման սուրբ ժողովոյն» բազմալեզվյան տպարանը, որը հայատառ գրքեր է հրատարակել մինչև 1756 թվականը (սկսել է 1623թ.), Վենետիկի Անտոն Բարտոլիի տպարանը՝ մինչև 1777թ. (սկսել է 1695թ.),

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 97-119:

որտեղ տպագրվել են Մխիթար Աբբայի «Աստուածաշունչը», Հայկազյան բառարանի Ա,Բ հատորները և այլ գրքեր, նաև Պիետրո Վալվազիայի և Զիովանի Պիացոյի տպարանը, որտեղ տպագրվել են Մ.Չամչյանի «Հայոց պատմության» Ա,Բ,Գ հատորները, Միլանի Ամբրոսյան վարժարանի և այլ տպարաններ: 1788թ. Ս.Ղազար կղզում Մխիթարյան միաբանությունն արդեն հիմնում է հայկական տպարան¹:

Աբգար Թոքատցու տպագարական գործունեության դադարից հետո Կ.Պոլսում նույնպես հիմնում են մի շարք տպարաններ, որոնց մեջ կարևորվում է Գրիգոր Մարգվանցու՝ XVII դարի վերջերին հիմնած տպարանը: Այդտեղ տպագրվել են «Տաղարանը» (1698), «Խորհրդատետր Սրբազան Պատարագի» (1706), «Յայսմաուրք» (1706), Ագաթանգեղոսի պատմությունը (1710), Հովհ.Մրքուզի «Կրթութիւն հաւատոյ» (1713), «Մեկնութիւն Աւետարանի Հովհ.Ոսկեբերանի» (թարգմանություն) «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ Գլակ» (1719), «Գիրք Տոմարաց և Տաղարան փոքրիկ» (1723), «Նարեկ» (1726), «Ներքող Լուսաւորչին» (1734) և այլն:

1700թ. Կ.Պոլսում տպարան է հիմնում Աստվածատուր Ապուլեխցին: Նույն թվականին էլ լույս է ընծայում Գր.Նարեկացու «Աղթագիրքը» կամ Նարեկը: Հրատարակվող գրքերի սրբագրությունը կատարում է Բաղդասար դպիրը: Աստվածատուրի տպարանում են տպագրվել Առաքել Սյունեցու «Հարանց վարքը» (1720, վերահրատարակություն), «Աղամգիրքը» (1721), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը (1729), «Գիրք Սահմանաց Ղաթի անյաղթ փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի» (1731), Հովհ. Հաննա վարդապետի «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի Երուսաղէմիս» (1734), Բաղդասար Ղաթիի «Քերականութիւնը» (1736), Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Յաճախապատումը» (1737), Գրիգոր Սկեռացու «Գիրք աղօթից» (1742), «Չայնքաղ շարականը» (1743) և այլն: Տպարանն արդեն ղեկավարում էր Մահտեսի Աստվածատուրի որդի Հովհաննեսը (նրանից հետո էլ՝ վերջինիս որդի Պողոսը): Պողոս Հովհաննեսի Արապյանը 18-րդ դարի վերջին քառորդում և 19-րդ դարի առաջին երկու տասնամյակներին հայտնի դեմք էր հայ և թուրք տպագրության պատմության մեջ: 1774թ. Վրաստանի թագավորը հրավիրում է նրան Թիֆլիս՝ վրացական

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 120-126:

տպագրական տառերը կանոնավորելու: Թիֆլիսից էլ Արապյանը մեկնում է Էջմիածին:

18-րդ դարում Կ.Պոլսում գործել են նաև այլ հայ տպարաններ: Դարասկզբին տպարան է հիմնել Սարգիս Դպիրը, որը մինչև 50-ական թվականների վերջը ղեկավարել են նրա ավագ և կրտսեր որդիները՝ Գևորգը և Մարտիրոսը: Նրանց տպագրած գրքերի մեջ էին նաև Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գիրքը (1728) և Բուզանդի առաջին հրատարակությունը՝ «Բուզանդարան պատմութիւնը» (1730): 1704թ. տպարան է հիմնում Պետրոս Լատինացին, 1735-ին՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիները, ինչպես նաև դպիր Աբրահամ Թրակացին, որը լույս է ընծայում Գրիգոր Տաթևացու քարոզության գրքերը (1740, 1741), «Ոսկեփորիկը» (1746), 1750-ին՝ ակնեցի Ստեփաննոս Պետրոսյանը, այնուհետև՝ տիրացուներ Հովհաննեսը և Հակոբը, 1790-ին՝ Մատթեոս դպիրը: Հայկական տպարան է բացվում նաև Իզմիրում (Ջմյուռնիա): Անգլիայում նույնպես երկու գիրք է լույս տեսնում՝ Մովսես Խորենացու Պատմության և աշխարհագրության հայերեն-լատիներեն հրատարակությունը (Լոնդոն, 1736) և «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց» գիրքը (Լոնդոն, 1780): 1771թ. հնդկահայ վաճառական Գրիգոր Միքայելյան Չաքիկյանցի (Չաքիկենց) հովանավորությամբ Սիմոն Երևանցի կաթողիկոսի օրոք Էջմիածնում կառուցվում է հատուկ շենք, և բացվում է Հայաստանում առաջին՝ «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» տպարանը, որտեղ առաջին գիրքը տպագրվում է 1772-ին: 1775թ. տպագրվում է Սիմոն կաթողիկոսի կազմած «Տօնացոյցը»: Չաքիկյանի օգնությամբ Էջմիածնում կառուցվում է նաև թղթի գործարան: 1777թ. Էջմիածնի տպարանը լույս է ընծայում «Տաղարան Սիմոն կաթողիկոսի» և «Կարգ թաղման Հայրապետաց» գրքերը, 1779-ին տպագրության է հանձնվում Սիմոն կաթողիկոսի «Պարտավճար» աշխատությունը, որը լույս է ընծայվում 1783-ին՝ Ղուկաս Ա. Կարնեցու հայրապետության շրջանում: 1785-ին լույս է տեսնում «Ատենի ժամագիրքը», 1787-ին՝ Յովսեփոս Եբրայեցու պատմությունը՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ, 1793-ին վերահրատարակվում է Սիմոն կաթողիկոսի «Տաղարան փոքրիկը»:

1772-ին հնդկահայ վաճառական Շահամիր Սուլթանում Շահամիրյանը իր որդի Հակոբի անունով հայկական տպարան է հիմնում Մադրասում, որտեղ տպագրվում են «Այբբենարան» (կամ «Քերականութիւն») և

Մովսես Բաղրամյան Արցախեցու «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքերը, 1773-ին՝ Շահամիրյանի «Որոգայթ փառացը», 1775-ին՝ Մեսրոպ երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», 1780-ին՝ «Պատմութիւն Ղահմագի» գրքերը, 1781-ին՝ Եկատերինա Բ-ի մի նամակի թարգմանությունը, 1783-ին՝ Շահամիրյանի «Տետրակ որ կոչի նշաւակ» գիրքը: 1780-ական թվականների վերջերին Մադրասում տպարան է սարքավորում նաև Հարություն Շնավոնյանը և 18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի առաջին տասնամյակում տպագրում 10-ից ավելի գրքեր: Հ.Շնավոնյանը հրատարակում է նաև հայերեն առաջին լրագիրը՝ «Ազդարար» ամսագիրը (1794 հոկտեմբեր-1796 մարտ՝ 18 տետրակ): 1796թ.Կալկաթայում տպարան է սարքավորում Հովսեփ Ստեփանոսյան քահանան: 1775թ. կայսերական արտոնագրով «հայ և հռոմ տառերով» տպարան են բացում Տրիեստի Մխիթարյանները (Նապոլեոնի արշավանքների հետևանքով 1811-ին տեղափոխվել են Վիեննա, այժմ՝ Վիեննայի Մխիթարյան միաբանություն): 1795-ին այդ տպարանն ուներ 47 տեսակ տառ:Մինչև 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկզբներին այդտեղ տպագրվել են 30-ի չափ գրքեր: Վենետիկի Մխիթարյանները տպարան են բացում 1789-ին և մինչև դարի վերջը տպագրում 17 անուն գիրք:

18-րդ դարի վերջին քառորդում Ռուսաստանում ևս բացվում են տպարաններ: Նորջուղայեցի Խալդարյանցը, Լոնդոնից տեղափոխվելով Պետերբուրգ, ծանոթացնում է Ռուսաստանի Հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ, որի խորհրդով էլ բացում է տպարան և 1781-1788թթ. տպագրում մի քանի գրքեր: Խալդարյանի տպարանը, որ նրա մահից հետո (1787) կոչվում էր «Տպարան Նորին Բարձր սրբազնութեան», 1789-ին տեղափոխվում է Նոր Նախիջևան, տեղավորվում ս.Խաչ վանքում: 1790-1796թթ.տպագրվում են մի շարք գրքեր, ապա տպարանը տեղափոխվում է Աստրախան, որտեղ լույս է տեսնում միայն մեկ գիրք (1797): Ըստ Գ.Լևոնյանի՝ 18-րդ դարում տպագրվել է մինչև 500 հայերեն գիրք¹:

19-րդ դարում հայ գրատպությունը զարգացում է ապրում, տպագրվում են հազարավոր գրքեր:

¹Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 131-168: Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 566-571:

Կ.Պոլսում շարունակում են գործել Պողոս Արապյանի տպարանները (նշվում է նրա 70-ամյա տպագրական գործունեության մասին): Նա հիմք է դրել նաև թուրքերեն տպագրությանը: Սուլթան Մահմուդ Բ-ն գնահատում է Պ.Արապյանի վաստակը, 1816-ին հատուկ հրովարտակով նրան կարգում Արքունի տպարանի տեսուչ, շնորհում արույրից ծուլված մի մամուլ-նշան՝ գլխարկի վրա կրելու արտոնությամբ: Տպագրական արվեստի մեջ կարևորվում է Գևորգ դպիրի պարսկերեն-հայերեն մեծահատոր բառարանը (1826): Ընտիր հրատարակություններ են «Ժամագիրք», «Ճաշոց» «Տոնացոյց», «Նարեկ», «Շարական», «Գիրք մեծագին և պատուական ականց», «Ագաթանգեղոս», «Թանգարան խրատու», «Հրաւեր սիրոյ», «Քերականութիւն Հայոց լեզուի», «Կրթութիւն քաղաքավարութեան», «Յայսմաւորք» և այլ գրքեր: 1853-ին Պողոս Արապյանի որդիները տպարանը տեղափոխում են Մուստաֆա-փաշա խան, իսկ թոռները՝ Օրթագյուղ (Օսմանյան կայսրություն): Տպարաններ են հիմնում մահտեսի Աբրահամ-Թերգյանը, Հ.Պարոնյանի ազգային ջոջերից մեկը՝ Հովհաննես Մյուհենտիսյանը, որը 1846-ից տպագրում է Տերոյանցի «Հայաստան» լրագիրը, «Հայաստան», «Մասիս» (սկզբի տարիներին), «Նոյեան աղանի», «Մեղու», «Սէր», «Կիլիկիա», «Ժամանակ», «Չեփիւռ Հայրենեաց» և այլ թերթեր ու հանդեսներ, բազմաթիվ գրքեր: Նա արժանանում է երրորդ կարգի մեծիտիե պատվանշանի և արվեստի շքադրամի: Պատրաստել է նաև հայկական ծայնանիշների ու խազերի կադապարներ, ծուլել տպագրության համար: Նա «փայլ աւելցուց ազգային տպագրութեան»: 1805-ին Կ.Պոլսում «քիթապձի» Մարգարը սարքավորում է առաջին «գրատունը»: Տպագրական գործը մանրամասն ներկայացրել է Թեոդիկը իր «Տիպ և Տառ» աշխատության մեջ: Տպարաններ են հիմնել նաև Ռուբեն Քյուրքչյանը, Հովսեփ Գաֆաֆյանը, Պողոս Քիրիշճյանը, Նշան Պերպերյանը և ուրիշներ:

Ջմուռնիայում ևս հիմնվում են մի քանի տպարաններ՝ Մեսրոպյան վարժարանի տպարանը, Տետյան եղբայրների, Գր.Մսերյանի, Մատթեոս Մամուրյանի տպարանները:

1833-ին Պետրոս պեյ Յուսուֆյանի միջոցներով տպարան է բացվում նաև Երուսաղեմում՝ Հայոց վանքի պարիսպներում: 1855-56թթ, Մկրտիչ վ. Խրիմյանը Կ.Պոլսում խմբագրում, հրատարակում է «Արծուի Վասպուրականի» ամսագիրը, ապա տպագրական պարագաները վերցնելով՝ վերադառնում է հայրենի Վան քաղաքը և Վարագա վանքում սարքավորում տպարան, շարունակում ամսագրի հրատարակությունը: 1863-ին

Խրիմյանը նշանակվում է Մուշի առաջնորդ, գնում է Տարոն՝ իր հետ տանելով նաև տպարանը: Գլակա վանքում իր աշակերտ Գարեգին Սրվանձտյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Լրատար Արծուիկ Տարօնոյ» ամսագիրը (մինչև 1865թ. կեսերը): 1863-ին տպարան է հաստատվում Նիկոմիդիայի Արմաշի հայոց վանքում, այնուհետև՝ Սեբաստիայում, Ադրիանուպոլսում, Մարզվանում՝ «Արուսյակ» թերթի տպարանը և Եվդոկիայում՝ Ազգային վարժարանի տպարանը: XIX դարում տպագրական-հրատարակչական գործերում մեծ նվաճումներ են անում Մխիթարյանները: Դեռևս 1833թ. «Հաւատով խոստովանիմ» աղոթքը տպագրում են 24 լեզվով, ուղարկում Բելգիայի թագավորին, որից շքանշան են ստանում: Արծաթե ու ոսկե մեդալներ, գովասանական առաջին կարգի գրեր են ստանում նաև տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներում: Այդ աղոթքը տպագրում են նաև 36 լեզվով, ուղարկում Եվրոպայի մատենադարանները, թանգարանները, թագավորներին, տարբեր անձնավորությունների:

Տրիեստի միաբանության վիճակը վատանում է, և 1810թ. տեղափոխվում է Վիեննա (Վիեննայի Մխիթարեանք), որտեղ էլ հիմնում է տպարան, բարձրացնում արտադրությունների որակը: Վիեննայի Մխիթարյան տպարանը նույնպես բազմալեզվյան տպարան էր. դեռ 1837-ին այդտեղ տպագրվում է «Որ օրինես գայնոսիկ» աղոթքը 25 լեզվով, իսկ 1893-ին՝ 50 լեզվով:

1848-ին Ճանիկ Արամյանը Փարիզում բացում է առաջին հայ տպարանը, որին կից սարքավորում է նաև մասնավոր գրածուլարան, հրապարակ հանում Արամյան տառերը (73 տեսակ), որոնք սկսել են գործածվել 1855-ին «Մասեաց աղանի» ամսագրի էջերում: Ճանիկ Արամյանը իր մասնավոր տպարանը սարքավորում է 1859-ին և տպագրում 20-ից ավելի գրքեր ու պարբերականներ, իսկ մինչ այդ սեփական տառերով շարված հրատարակությունները կատարում էր Վելմարի կամ Մեյերի տպարաններում:

1862-ի վերջերին Արամյանը իր տպարանով տեղափոխվում է Մարսել, 1864-ին՝ Կ.Պոլիս, 1865-ին տպագրում մի ընդարձակ օրացույց, այնուհետև 14 տարվա ընթացքում (մահանում է 1879թ.) լույս ընծայում Ծերենցի, Խրիմյանի, Չերազի, Դուրյանի, Սրվանձտյանի, Աճեմյանի և այլոց գրքերը, Կռիլովի առակները և այլ գրքեր: Նրա գործը մինչև 1898թ.

շարունակում է իր 14-ամյա որդին՝ Ներսես Արամյանը՝ հոր լավագույն աշակերտ Գ. Պաղտատյանի աջակցությամբ:

1856-ին Փարիզում տպարան է հիմնում Էջմիածնի միաբան, բանասեր Կ.Վ.Շահնագարյանը, որը 1862-ին հրավիրվելով Մանչեստր՝ տանում է նաև իր «գործատունը» և 1863-ից հրատարակում «Երկրագունդ» հանդեսը: Մարսելում 19-րդ դարում միակ հայ տպարանը պատկանում էր Սկրտիչ Փորթուգալյանին, որը հիմնել էր 1885-ին, հրատարակել «Արմենիա» լրագիրը:

19-րդ դարի 10-ական թվականներին հայկական տպարան է հիմնվում Պետերբուրգում Հովսեփ սարկավագ Հովհաննիսյան Հաշտարխանցու անվամբ: Այդ տպարանը 20-ական թվականների վերջերին անցնում է Լազարյան ձեռնարանին: Պետերբուրգում գործում էր նաև Ռափայել Պատկանյանի տպարանը, որտեղ տպագրվել են «Հյուսիս» շաբաթաթերթը և Գ.Բ.Պատկանյանի «Հայոց ազգի պատմությունը»: Մոսկվայում Լազարյան ձեռնարանը 1829-ին հիմնում է սեփական տպարան, որը գործում է նաև 20-րդ դարի սկզբում: Այդ տպարանում են լույս տեսել «Հյուսիսսփայլ», «Ճռաքաղ», «Համբավաբեր Ռուսիո» պարբերականները: 1831-ին լույս է տեսել աշխարհաբարով գրված «Համառոտ քննութիւն քրիստոնեական հավատո և մահմեդական կրոնի» գիրքը:

80-ական թվականների վերջերին Մոսկվայում հայկական տպարան է հիմնում նաև Սկրտիչ Բարխուդարյանը, որը գործում է մինչև 20-րդ դարի 10-ական թվականները: 1858-ի աշնանը Թեոդոսիայում հիմնվում է Խալիպյան ուսումնարանը, որին կից 1859-ի մայիսին բացվում է նաև Ազգային տպարանը և գործում մինչև 1874թ.:

19-րդ դարի 70-ական թվականների կեսերին Հովհաննես Տեր-Աբրահամյանը Ռոստովում բացում է մասնավոր տպարան, մինչև 90-ական թվականները լույս ընծայում մի շարք գրքեր: Տպարան է բացում նաև Նոր Նախիջևանում:

Մինչև 1837թ. անգործության էր մատնված Էջմիածնի տպարանը: Այդտեղ գիրք է տպագրվում միայն 1838-ին: Էջմիածնի տպարանը ակտիվ գործում է Գևորգ Դ կաթողիկոսի տարիներին (1866-1882): 1868-ին հիմնվում է Մայր Աթոռի «Արարատ» կիսապաշտոնական ամսագիրը: Էջմիածնի տպարանի առաջադիմության գործում մեծ դեր են ունենում Մակար (1885-1892) և Սկրտիչ (1892-1907) կաթողիկոսները: Գայանեի

վանքի սենյակներից մեկում Վահան վ.Բաստամյանը Գևորգ Ռկաթողիկոսի թույլտվությամբ սարքավորում է տպարան և 1874-76թթ. հրատարակում «Ղպրոց» մանկավարժական ամսագիրը: Աստրախանի տպարանը 19-րդ դարում կոչվում էր «Տպարան ս. Էջմիածնի»: Թիֆլիսում 1824-ին Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին բացում է դպրոց. 1823-ի վերջերից արդեն գործում էր տպարանը (փակվեց 1830թ.): 1843-ից, երբ Ներսես Աշտարակեցին կաթողիկոս էր, Ներսիսյան դպրոցի տպարանը նորից սկսում է գործել, տպագրվում է նաև «Կովկաս» լրագիրը: Առաջին տարիներին այնտեղ է տպագրվում նաև «Մեղու Հայաստանի» լրագիրը՝ Ստ. ք. Մանդինյանի խմբագրությամբ: Ներսիսյան դպրոցի տպարանը կովկասահայության մեջ առաջինն էր և մի քանի տասնամյակ միակը:

1850 թ.Նոր Նախիջևանից Թիֆլիս է գալիս Գաբրիել ք. Պատկանյանը, որտեղ էլ հրատարակում է «Արարատ» շաբաթաթերթը «Ի Տպարանի տեառն Գաբրիելի Պատկանեան»: 1860թ. Համբարձում Էնֆիաձյանը Գաբրիել Մելքումյանի ընկերակցությամբ մի բարեկարգ տպարան է բացում, որտեղ էլ սկսում է տպագրվել Մ.Աղաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը: Այստեղ էին տպագրվում նաև «Հայկական աշխարհ», «Գարուն», «Վաճառական», «Մեղու Հայաստանի», «Փորձ» պարբերականները: 1870-ական թթ. Թիֆլիսում հիմնվում է Հովհ.Մարտիրոսյանի տպարանը, որը տպագրում է դասագրքեր, ժամանակի գեղարվեստական գրականության մեծ մասը, մի շարք պարբերականներ՝ «Մշակ», «Մանկավարժական թերթ», «Արծազանք», «Աղբյուր», «Հորիզոն» (հանդես) և այլն: Տպարանի աշխատանքը մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը շարունակում է նրա որդին՝ Կոնստանդին Մարտիրոսյանը: 1896-ին տպարան է հիմնում նաև Հովհաննեսի մյուս որդին՝ Մնացական Մարտիրոսյանը, որն էլ գործում է մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Այդ տպարանում են տպագրվում «Թատրոն», «Ազգագրական Հանդես», «Գեղարվեստ» հանդեսները: 19-րդ դարի վերջին տասնամյակներին Թիֆլիսում գործում էին նաև Մովսես Վարդանյանի (1881), Տիգրան Նազարյանցի «Արոր» (1891) և այլ տպարաններ¹:

Թիֆլիսից հետո տպարանական գործը ծնունդ է առնում Շուշի քաղաքում: Անուիետև տպարան է ստեղծվում Շամախիում, որտեղ առաջին

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 173-186:

գիրքը տպագրվում է 1856թ.: 1853թ. երկրաշարժի պատճառով նահանգական կենտրոնը Շամախուց տեղափոխվում է Բաքու, որտեղ էլ 1872թ. բացվում է տպարան: 1870-ական թվականներին տպարաններ են բացվում Գանձակում, Կիրովաբադում, Երևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրի), 1880-ական թվականներին՝ Ախալցխայում, 1890-ին՝ Նոր Բայազետում:

Շուշիում առաջին հրատարակիչները օտարերկրացի միսիոներներն էին: 1822թ. Բազելի Ավետարանական-քարոզչական ընկերությունը Պետերբուրգում ռուսական կառավարությունից թույլտվություն է ստանում՝ Շուշիում սկսելու քարոզչական գործունեություն: Այս ընկերության ներկայացուցիչները Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Ջարեմբայի ղեկավարությամբ 1823-ին ժամանում են Շուշի, տարածք գնում ու ձեռնարկում ուսումնարանի, տպարանի և այլ պետքերի համար շենք շինել: «...երեք քարուկիր կրկնայարկ տուն ամենայն յարմարութիւններով, շուրջը պարտեզ, ջուր ծաղկոց»¹:

Բազելի ընկերությունը քարոզիչներին հանձնարարել էր «1. Տարածել Աստուծոյ խօսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ, առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ Այլասեռից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը: 2. Սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խօսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը-արաբերէն, պարսկերէն, թաթարերէն և նոր յունարեն: Ձեզանից մինն, ասած է հրահանգների մէջ, գիտէ սլաւոնական լեզուներն և նոր յունարէնի տարերքը. միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը: 3. Հիմնել մի յարմարաւոր տեղ տպարան՝ Ս. գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»²: 1827-ին Շուշիում բացվում են Բազելի միսիոներական ընկերության ուսումնարանը և տպարանը: Միսիոներական հրատարակչությունները լույս էին տեսնում ինչպես Շուշիում, այնպես էլ Մոսկվայում՝ Լազարյան ձեռնարանի տպարանում: «Միայն այս տպարանը ինքնըստինքյան մի գեղեցիկ երևոյթ էր Շուշու խաւար իրականութեան մէջ, որին կարող էր նախանծել նույնիսկ Էջմիածինը իր անկատար տպարանով: Միսիոներների տպարանական գործունէութեան արդիւնքներն էին (թե՛ Շուշում, թե՛

¹ Հ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886. էջ 8:

² Հ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, էջ 4:

Մոսկվայում) 11.679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքերը... Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1828թ.¹ «Պատմութիւն Սուրբ Գրոց»¹: Թե՛ Շուշիում 7-8 տարվա ընթացքում հրատարակած, թե՛ նրանց հետնորդների՝ Լազարյան ձեռնարանում տպագրած գրքերը աշխարհաբար էին, ժողովրդին հասկանալի լեզվով: Բայց միսիոներները բողոքականներ էին և խանգարում էին ռուսական կայսրության կրոնական միասնությանը: Այդ պատճառով էլ Բազելի միսիոներական ընկերության գործունեությունը, որ սկզբում խանդավառությամբ, խրախուսանքով էր ընդունվում Ներսես Աշտարակեցու, Եփրեմ Կաթողիկոսի, ընդհանրապես հայ հոգևորականության կողմից, Հովհաննես Կարբեցու ժամանակ դժգոհության տեղիք է տալիս: Ժամանակի ընթացքում բացահայտվում են նրանց բուն կրոնական ձգտումները: 1832թ. Նիկոլայ Առաջին կայսրը արգելում է Բազելի միսիոներական ընկերության աշխատանքը հայերի մեջ: Կովկասի գլխավոր կառավարիչ պարոն Ռոգենը 1835թ. հունվարին գրություն է ուղարկում ներքին գործերի նախարարին՝ հայտնելով, որ բազելյան քարոզիչների գործունեությունն այլևս անթույլատրելի է Կովկասում: Միսիոներները խնդրում էին թույլատրել գոնե տպարանական գործունեությամբ զբաղվել: Բայց իզուր: Նրանք ստիպված եղան ծախելու Շուշիի իրենց ձեռնարկություններն ու գույքերը: Վերջին միսիոներները Շուշին լքում են 1838թ.: «Ղարաբաղի հայ ժողովրդական կրթության գործը զրկում էր մի կարևոր գործչից, որ կրոնական կերպարանք ունենալով հանդերձ՝ չէր կարող արհամարհելի մի երեւոյթ համարուել ժողովրդի վրայ բռնացած «շատ արտասուելի տգիտութեան» հանդէպ», -գրում է Լեոն²:

Բազելի միսիոներական ընկերության գործունեության շրջանում Շուշիում տպագրվել են հետևյալ գրքերը.

1. Պատմություն Սուրբ Գրոց (թարգմանություն ռուսերենից), 44 էջ, 1828: 2. Ընթերցուածք ի Ս. Գրոց հին կտակարանի (ի պիտոյ վարժարանաց), 28 էջ, 1829: 3. Հավաքումն Աստուածային վկայութեանց, 184 էջ, 1829: Պողոս Ներսիսեանց Ղարաբաղի՝ Համառոտ հայկական քերականութիւն, 30 էջ, 1829: 5. Հովսեփ Արցախեցի՝ Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց), 398 էջ, 1830: 6.

¹ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Ղայրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 93:

² Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Ղայրոցի (1838-1913), էջ 96:

Ժամանակի վերջն (թարգմանություն) 46 էջ, 1832. 7. Աւետարանի ճշմարտութեան և գորութեան համար (թարգմանություն), 18 էջ, 1833: 8. Կիրեղ Երուսաղեմցի՝ Ճառ վասն տասն հրամանաց հաւատոց, 46 էջ, 1833: 9. Ճանապարհորդութիւն առ բարեպաշտ կեանս (թարգմանություն), 150 էջ, 1833: 10. Քարով ավագ ուրբաթ օրին համար, 1833: 11. Մեղքը խաղ անելու բան չէ (թարգմանություն), 14 էջ, 1833: 12. Չամչեան Միքայել, Քերականութիւն հայկազեան լեզուի, 328 էջ, 1833: 13. Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար, 77 էջ, 1833: Բազելի քարոզչական ընկերությունը 1834թ. Մոսկվայում աշխարհաբարով հրատարակում է իրենց թարգմանած ավետարանը¹:

Միսիոներական ընկերության Շուշիի տպարանը գնում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտը, շարունակում գրքեր տպագրել, հրատարակությունների վրա դրոշմելով՝ «Հրամանաւ Տեառն Բաղդասարայ իշխանազնի Ջալալեան սրբազան արքեպիսկոպոսի և Մետրոպոլիտի Հայոց ամենայն Աղուանից»: Հիշատակվում է նաև տպարանի անունը՝ «Տպարան վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Բարձր Սրբազան մետրոպոլիտին Բաղդասարայ», ավելի ուշ՝ «Ի տպարանի Հայոց Հոգևոր Տեսչութեան»²: Մետրոպոլիտի տպարանը 1837թ. տպագրում է «Շիլիոնեան կալանաւորը»՝ թարգմանությամբ Մովսես Զոհրապեանի, 1839-ին՝ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից»-եսայի կաթողիկոս Հասան Ջալալեանի: Այնուհետև լույս են տեսնում «Մաշտոց», «Քերականութիւն համառօտ», «Տետր այբբենական», «Կրօնագիտութիւն» և այլ գրքեր: Բաղդասար եպիսկոպոսի մահից հետո էլ (1854) այդ տպարանը պատկանում էր Հայոց հոգևոր տեսչությանը կամ դպրոցին և իր գոյությունը պահում է մինչև 70-ական թվականները: 1874թ. արդեն դժվարությամբ էին տպագրում Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի մի քանի համարները:

1880-ական թվականներին Շուշիում բացվում է բողոքական Միրզաջան Մահտեսի Հակոբյանի արագատիպ տպարանը: Այդ տպարանի առաջին սրբագրողը Լեոն էր: Այդտեղ 1881-ին տպագրվում է Րաֆֆու «Խենթը», ինչպես նաև Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» ոտանավորների գիրքը: Գրքում կային ինչպես ինքնուրույն բանաստեղծություններ, այնպես էլ ռուս և համաշխարհային մի շարք հեղինակներից՝

¹ Տեր-Պատկարյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 87-88:

² Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 228-229:

Հայնեից, Բայրոնից, Գյոթեից, Շիլլերից, Պուշկինից, Լերմոնտովից, Դոբրոլյուբովից թարգմանություններ:

1882թ. Շուշիում հրատարակվում է Կ.Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի խաչան) «Ղըլըցէ կնանոց պընը փեշակը» գիրքը, որը գրված է Ղարաբաղի բարբառով, 1883-ին՝ Մակար վարդապետ Բարխուդարյանի «Արագը տարին կտարի» աշխատությունը, որը նույնպես գրված է բարբառով, 1886-ին՝ Սկայորդու՝ Լեոյի «Նոր ցավ» գրվածքը, այլ հեղինակների մի շարք գրքեր: 1882-ին Շուշիում է լույս տեսել նաև «Գործ» գրական, քաղաքական ու ազգային ամսագրի առաջին համարը, որի խմբագիր-հրատարակիչը Սիմեոն Հախումյանն էր: «Գործի» մնացած համարները 1883-ին տեղափոխվել են Թիֆլիս: 1886-ին առաջին անգամ հայերեն լույս է տեսնում Ն.Գոգոլի «Տարաս Բուլբան»: Շուշիում է լույս տեսել նաև Մ.Աբեղյանի «Նմուշներ» ժողովածուն, «Դավիթ և Միեր ժողովրդական դյուցազնական վեպ» աշխատությունը: Լեոյի աշխատությունների մեծ մասը նույնպես առաջին անգամ տպագրվել է Շուշիում՝ «Վե՞պ թե պատմություն» (1887), «Կոյր աղջիկը», «Վահան Մամիկոնեան» (1888), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891), «Թաթախման գիշերը» (1892) և այլն: 1894թ. հրատարակվում է Ֆիրդուսու չափածո գրվածքը՝ «Ֆիրդուսի՝ Ջոհակ-Բյուրասպի Աժդահակ», որը պարսկերենից թարգմանել է Սամվել Գյուրգադյանցը: 1896-ին Երվանդ Լալայանի հրատարակությամբ լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը (հաջորդ համարները հրատարակվում են Թիֆլիսում): 1899-ին՝ Հ. Ճաղարբեկյանի «Հարստության ավետարան» գիրքը:

1885-ին վերաբացվում է հոգևոր տեսչության տպարանը: Բացվում է նաև Տեր-Սահակյանի տպարանը: Փաստորեն այդ շրջանում Շուշիում գործում էր երեք տպարան: Իր հրատարակած գրքերով, տպագրական տեխնիկայով, տառատեսակներով աչքի էր ընկնում Մ.Մահտեսի Հակոբյանի տպարանը, որը մինչև 1897թվականը հրատարակել էր գիտական, ուսումնական, գրական 83 անուն գիրք: 19-րդ դարի վերջին տասնամյակում հոգևոր վարչության տպարանը փաստորեն դադարեցնում է իր գոյությունը, բայց 20-րդ դարում հիմնվում է մի նոր տպարան՝ Բաբաջանյանի տպարանը¹: Հայերեն հրատարակչության գործը Շուշիում շա-

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 228-229: Տեր-Պասապարյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 91-93, Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989, էջ 64-77:

րունակվում է մինչև 1920 թվականը՝ մինչև քաղաքի հայկական մասի ավերումը. Նույնիսկ 1921-ին տպագրվել է «Գյուղացիական կոմմունա» (Օրգան Ղարաբաղի և Ջանգեզուրի գյուղացիական առաջին ինտերնացիոնալ համագումարի) թերթի մեկ կամ երկու համարը՝ հայերեն, ռուսերեն և թուրքերեն¹:

Այսպիսով՝ XIX դարի 30-ական թվականներից Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից ու հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկը: Սակայն 1905-1908 թթ. հայ-թուրքական արյունալի ընդհարումները, 1908թ. թուրքերի մուտքը Շուշի, մուսավաթականների քաղաքականությունը 1918-1920թթ. Շուշին դարձրել են կիսաավերակ բնակավայր: «Ժողովուրդների բարեկամության» տարիներին Շուշին փոխվել է, դարձել խորհրդային երկրի քաղաք, բայց 20-րդ դարի վերջին այն նորից ավերվեց:

Այսօր Շուշին վերականգնում է իր ազգային դիմագիծը: Հուսանք, որ այն նորից կդառնա հայկական մշակույթի կենտրոն ու ծաղկուն քաղաք:

Армянское книгопечатание и Шуши

Офелия Бабаян

Резюме

Армянский печатник Акоп Мегапарт в1512г. в Венеции напечатал первую армянскую книгу <<Урбатагирк>>. Во многих странах мира создавались армянские типографии, армянские книги печатались и во многих не армянских типографиях. Армянское книгопечатание особенно развивалось в 19-ом веке. Среди армян Кавказа первые типографии были созданы в Тифлисе (1823), в Шуши (1827), в Шемахи (1856), в Баку (1872). В Эчмиадзине первая книга была напечатана в 1838г. В 1870-ые года открылись типографии в Гандзаке, Ереване, Александраполе. В Шуши первыми издателями были базельские миссионеры. В годы их деятельности в Шуши были напечатаны 13 книг. Типографию миссионеров купил и продолжил книгопечатание глава епархии Карабаха Багдасар Митрополит. В 1880-ые годы в Шуши открылась и скоропечатанная типография Мирзаджана Акопяна, а также типография Тер-Саакяна. В начале 20-ого века была основана типо-

¹ Տեր- Պատարյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 94-95, Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989, էջ 122:

рафия Бабаджаняна. Армянское издательское дело в Шуши продолжалось до 1920г., до разрушения армянской части города.

Сегодня Шуши восстанавливает свой национальный облик, вновь становится центром армянской культуры.

The Armenian typography and Shushi.

Ofelia Babayan

Summary

In 1512 the first Armenian printer, Hakob Meghapart in Venice, printed the first armenian book «Urbatagirk». In many countries of the world created by the armenian typography, armenian books printed in many not Armenian typographies too.

Armenian printing increased especially in the 19th century. Among the Armenians of the Caucasus first printing press were established in Tiflis (1823), Shushi (1877), then in Shamakhi (1856), in Baku (1872).

The first book was published in Etchmiadzin in 1838. In the 1870' s had opened typographies in Yerevan, Gandzak and Alexandropol. In Shushi the first publishers were Basel missionaries.

In the course of their work in Shushi were printed 13 books sufficiently processed by ashharabar. A printing press of missionaries bought and continued the typography the head of the Diocese of Karabakh Metropolitan Baghdasar.

In the 1880' s in Shushi was opened fast printing press of Hakobyan Mirzhadzhana, pilgrims in Yerusalem and Ter-Sahakyan' s printing press. In the early 20th century based the typography of Babajanyan Armenian publishing in Shushi continue until 1920, until destruction of the Armenian part of the city. Today Shushi restore its national image gradually becomes center of Armenian culture.